



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

• 715
71



549
851-7115
P-71

30 MAY 2011

ԵՐԵՎԱՆԻ ՄԱԿԱՐԴԱՎԵՐՔՆԵՐԻ

5

O. E. O. Ο. Ο. Ο.

0. роза

ԱՆՁՆԱԳՈՅՆ ՄԱՆՈՒԿ

500

Фурқи. ннւերէլից



Ф. В. Ф. Л. В. 2

ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 12.

1905

24 JUL 2013

5520

549 179m

5966



Ա.

Պարնան արեւ հալեցրեց դաշտերի
ու մարգագետնների ձիւնը: Օրը հետ-
զհետէ տաքանում էր. դաշտը ծած-
կուեց թաւշեայ խոտով. թռչունները
ճռւղում էին օդում. հարևան գետակը
փրփուալով ու գոռալով առաջ էր վա-
գում, կարծես իսկական գետ լինէր. իսկ ճահճի
ջուրը այնքան էր շատացել, որ նմանւում էր
լճի՝ հին եղեգնի գեղնագոյն կղզիակներով:

Ամենքը լոյս աշխարհ էին դուրս գալիս. հա-
ւերը, սագերը, բաղերն ու աղաւնիները ճահճ-
ների մէջն էին թաւալում. չները տաքանում
էին արեւ տակ՝ թաթերն ու պոչերը թափ տա-
լիս և անտարբեր նայում անց ու դարձ անող-
ներին. կովերը թափառում էին հայեաթից դուրս
և կարծես սպասում էին, թէ ե՞րբ կըտանեն
սրանց արօտ: Կատունները կոկիկ շրջում էին
տամնիքների վրայ և ուրախ նայում օդում թռչ-

ծաերին, կարծես ասում էին նրանց.—«ԶԵք
ազատուելու մեր ձանկերից»։ Մանուկները ջուր
յայտեցնելով՝ խաղում էին ձահիճների մէջ, ուշք
չդարձնելով՝ թէ ինչպէս են կեղտոտում իրանց
շորերը. ոմանք տաշեղներից նաւակներ էին շի-
նում, ոմանք ոտքերով հունձում էին ցեխը,
ոմանք թաց կաւից թերծում էին ափսէներ, գա-
ւաթներ, կարկանդակներ, ոմանք էլ կոխոտում
էին փողոցի ցեխը. ամենքը գոհ, ուրախ և
զուարթ էին։

Սակայն մէկը ուրախ չէր։ Փողոցում, խար-
խուլ խրճիթների մօտով գլխակախ անցնում էր
ինը տարեկան մի տղայ՝ արտասուքից ուռած
ու կարմրած գէմքով։ Նա չէր տեսնում ոչ արել,
ոչ թուչուններին, ոչ էլ մանուկներին. կարծես
նոյն իսկ ձանապարհը՝ չէր նկատում. նրա միտքը
ուրիշ բանով էր զբաղուած։

—Գրիգորիկ, Էյ Գրիգորիկ, Ել մեզ մօտ
նաւակներ շինենք, ձայն տուեցին նրան մի
ձահձից։

—Է՞ս, թողէք, արտասանեց նա և մինչեւ
անգամ չնայեց նրանց ուրախ խաղին. նրա գէմքն
արտայայտում էր մի տեսակ դառնութիւն։

—Դուք կնւշտ էք.... փնթփնթաց նա և
ուրս եկաւ գիւղից։

Նա բոսն քայլ անցաւ գիւղի ձանապարհով,

յետոյ շուռ տուեց դէպի շաւիղը՝ հերկած դաշ-
տերի միջով.

Գրիգորիկն արդէն երկու օր է որ քաղցած
էր իւր մօր ու քրոջ հետ միասին. երեկ մայրը
տուեց նրանց հացի վերջին պատառը, իսկ այսօր
Գրիգորիկն ~~ասպարուած~~ էր գիւղ գնալ «ալիւր
ինդրելու»։

Գրիգորիկն իւր մայրիկի հետ ապրում էր
անտառում՝ փոքրիկ աղբատիկ խրճթի մէջ։ Քանի
որ կենդանի էր նրա հայր՝ անտառապահ Սիմէօ-
նը, նրանք չափաւոր ապրուստ ունեին։ Սիմէօնը
իւր աղայից ստանում էր ոռձիկ, որը ծախուռում
էր անհրաժեշտ պիտոյքների վրայ։ Ճիշտ է, եր-
բեմն պակասում էր փողը, բայց քաղցածութիւն
չէին քաշում։ Նրանք սեպիական կով էլ ունեին,
որ միշտ արածում էր նոյն անտառում. ունեին
նոյնպէս մի տասնեակ հաւ, իսկ տօն օրերին
խոզ ու գոճի էլ էին ունենում. մի խօսքով,
այնպէս էին ապրում, որ խեղճ գիւղացիք նա-
խանձում էին նրանց։

«Սրբայութիւն է վայելում Սիմէօնը, նա
կարող է վար ու ցանքով էլ չպարապել. նա
մեր օրին չէ», ասում էին նրանք։

Սակայն ով գիտէ, թէ ում ինչ է վիճա-
կուած։ Սիմէօնի ընտանիքի գլխին մեծ գժբաղ-
դութիւն եկաւ. Մի օր, սաստիկ ցրտին, դեռ

լոյսը չբացուած՝ Սիմէօնը գնաց անտառ. յանկարծ փոթորիկ բարձրացաւ. նա մոլորուեց ճանապարհին և հողին աւանդեց Աստուծունսառեց: Երբորդ օրը մօտով անցնող գիւղացիք գտան նրան ընկած անտառի ճանապարհից մի փոքր հեռու: Նրան բերեցին խրձիթ՝ Մարիամի մօտ, որը սաստիկ վշտացաւ ու շատ արցունք թափեց: Գրիգորիկը յիշեց այս բոլորը և սարսուռ զգաց: Իսկ յետոյ, 2—3 ամիս անցած՝ կարիքն ու չքաւորութիւնը զլուխ հանեցին..... կովը ծախեցին, հաւերը նոյնպէս մէկը միւսի յետեկից ծախեցին ու մնացին դատարկ: Մարիամը մնաց այրի, վեց ամսական երեխան ձեռին, իսկ Գրիգորն ու իր քոյլը նոյնպէս մօր ձեռն ու ոտք կապում էին: Լուսիկը 10 տարեկան էր միայն. այդ ժամանակ աղայի կառավարիչը սկսեց նրանց նեղել:

— Արդէն ժամանակ է, ասում էր նա, այս տեղից հեռանալու. դեռ երեք ամիս էլ աւելորդ էք ապրում, տեղ բռնում. ահա եկող շաբաթ գալու է նոր անտառապահը և դու, Մարիամ, խրձիթդ դատարկիր:

«Դատարկիր» — ասելը հեշտ է..... բայց ուր գնալ: Մարիամի ծնողները վաղուց էին մեռել, իսկ հանգուցեալ Սիմէօնը ոչ մի ազգական չունէր: Գործարան մտնել կամ աղախին դառնալ

նա չէր կարող, որովհետեւ երեխային բնչ անէր, ումը յանձնէր, ուրիշ գործ էլ չէր կարող ճարել: Մարիամը երեք ամսուայ ընթացքում հալից ընկաւ, նիհարեց ու պառաւեց. երեխային էլ այնպէս նիհարեցին ու մաշուեցին, որ ցաւալի էր նրանցը նայել.....

Ահա այս մտքերն էին զբաղեցնում Գրիգորիկին, երբ նա անցնում էր սառցապատ շաւղով:) Ահա և անտառը. այստեղ՝ ամեն մի կոճղ, ամեն մի անկիւն ծանօթ է նրան. նա մի քանի անգամ չափչփել է այդ տեղերը, չէ՞ որ Գրիգորիկը այստեղ ծնուել ու մեծացել է:





Բ



այն մարգագետնի վրայ, խիտ մայրիների մէջ գտնւում էր մի խրճիթ, որի տանիքը ծածկուած էր գրեթէ փթած յարդով ցախի խուրձերի հետ միասին. կիսածուռ պատըշգամբը մի ոտք սանդուխքով և խարխուլ ծածկոցով՝ կարծես լալիս եր փոքրիկ, աղօտ լուսամուտը կիսով չափ ծեփած էր թղթով, իսկ միւս կիսի ապակու մէջ արեր շողշողում էր ծխածնի գոյներով:

Մարիամը նստած էր պատշգամբում երեխան ծնկներին: Լուսիկը կանգնած էր նրա կողքին. երկուսի աչքերն էլ արտասուքով լցուեցին:

— «Հը, ի՞նչ արիր» միաձայն հարցըրին երկուսն էլ:

— Ոչ ոք չի տալիս, մայրիկ, ամեն տեղ գնացի. ամենն էլ ասում են, թէ անժամանակ

եւ խնդրում, մենք ինքներս չենք կարողանում կառավարուել, չէ բաւականանում:

Նա երեսը շուռ տուեց և սկսեց մի քանքերել փթած գերանի մօտ: Մարիամը գլուխն աւելի կախ գցեց և ոչինչ չպատասխանեց:

— «Մայրիկ, այ մայրիկ, ինչ ես լոել. այժմ ի՞նչ անենք, չէ որ սոված ենք», արտասուելով ասաց Լուսիկը և քաշեց մօր թկից:

— Գնա, Լուսիկս, կառավարչի մօտ, գուցէ տայ. ասա, որ ահաւասիկ սովից..... երեք օր է բան չենք կերել:

Լուսիկն ակամայ ճանապարհ ընկաւ:

— Իսկ եթէ չտայ—երկիւղով հարցըրեց նա:

— Ի՞նչ արած. եթէ չտայ, սովից պէտք է մեռնենք, ուրիշ հնար չկայ. վերջը դա է, մտախոհ ասաց Մարիամը. Լուսիկը զնաց:

Գրիգորը երկար ժամանակ կանգնած էր լուռ՝ մէջքը դարձրած մօրը. երկար ժամանակ եղունգով քերում էր գերանը, վերջապէս դարձաւ մօրն ու ձայն տուեց.

— Մայրիկ, էյ մայրիկ.....

— Հը, ի՞նչ է:

— Պատրաստութիւն տես, ես քաղաք կը գնամ:

Մարիամը միանգամից չհասկացաւ նրան:

— Ուր, ի՞նչ ասացիր:

— Քաղաք՝ փող աշխատելու:

— Դու, ի՞նչ ես ասում, ի՞նչ քո բանն է քա-
ղաք գնալը, կամ դու ի՞նչ կարող ես շինել:

— Ահա թէ ի՞նչ. — կը գնամ վաճառականի
մօտ կամ գործարան կը մտնեմ, չէ՞ որ ուրիշները
գնում են:

Մինչև այժմ Մարիամի մտքովն անգամ չէր
անցել, որ Գրիգորը կարող է այդպիսի բան անել:
Նա այնքան սիրում էր իւր որդոցը, որ նրանցից
բաժանուելու մասին չէր մտածել, և վերջապէս
նրանք փոքր էին թւում մօրը.....

Գրիգորիկի հաստատուն ձայնը, փոքրիկ ու
հանդարտ դէմքը, ուշագրաւ կերպարանքը — այս
բոլորը երազ էին թւում Մարիամին. Նա կարծես
այդ ժամին մեծացել էր մօր աշքում, այնքան
մեծացել, որ յիշեցնում էր իւր հայր Սիմէօնին.
և այն միտքը, որ Գրիգորիկը կարող է աշխատել՝
այլևս այնքան տարօրինակ չէր թւում նրան:

— Բայց ի՞նչպէս կարող ես գնալ.... այստեղից
մինչև քաղաք համարեա քառասուն վերստ է,
եթէ ոչ աւելի:

— Կը համեմ, միենոյն է..... սովից հօ չը-
պիտի կոտորուենք:

Մարիամը մի քաշեց:

— Ես, Աստուած քեզ հետ, որդեակ, եթէ
կարծում ես, որ ոյժդ կը համանի, գնա, կարելի է,
այդ է քո բաղդը:


Կէս ժամ անցած՝ Լուսիկը վերադարձաւ մի
մեծ կտոր հաց ձեռին:

— Տուեց, ուրախ-ուրախ ասաց նա. միայն
յիշեցրեց, որ եկող շաբաթ անպատճառ տեղա-
փոխուենք այստեղից. «Նոր պահապանն արդէն
եկել է» ասաց:

Հացը ամենին ուրախացրեց: Գրիգորի հա-
մար սկսեցին ճանապարհի պատրաստութիւն
տեսնել: Մայրը հանեց արկղից հօր շորերն ու
սպիտակեղէնը, որոնցից մի քանիսը նորից ձեւեց
ու կարեց. դարսեց մի հաստ քաթանի տոպլրակի
մէջ մի ձեռք սպիտակեղէն, մի կտոր հաց, դառը
լաց եղաւ ու որդուն ճանապարհ ձգեց դէպի
քաղաք: Նա ի՞նքը գնաց կառավարչի մօտ և
խնդրեց, որ թոյլ տայ իրան ամառը մնալ ան-
տառապահի հին կիսափուլ տնակում, որը գտն-
ւում էր անտառի ծայրին: Դա մի ողորմելի
խրճիթ էր..... դատարկ, առանց տանիքի, առանց
դռների, կոտրած լուսամուտով և քանդուած
վառարանով: Մարիամն ու Լուսիկը ձեղքերը մի
կերպ ծածկեցին ցախով ու մամոռվ, տանիքի փո-
խարէն նոյնպէս ցախ դարսեցին վերեկց, վրան էլ,
ուրքան կարելի էր, հաղ ածեցին, իսկ դուռն ու պա-
տուհանը գիշերները փալասներով էին ծածկում:

Մարիամը մտադիր էր աշնանը ծծից կտրել
փոքրիկ Աշոտին և գնալ բանելու. իսկ առ-

այժմ նրանք ապրում էին մի կերպ..... երբեմն կիսով շափ քաղցած, երբեմն էլ չոր հացով: Իսկ երբ մի որևէ աշխատանք էր լոյս ընկնում (որ շատ հազիւ էր պատահում) ալիւր էին գնում և գիւղում հարեաններից մէկի մօտ հաց գնում: Երբեմն էլ խանութից առնում էին գետնախնձոր կամ սոխ ու լոբի:



Գ



Գրիգորիկը գնում հա գնում էր փոստի ճանապարհով. երբ յոգնում էր, նըստում էր, շունչ առնում և ապա նորից գնում: Գիւղացի տղայի համար մանդալը սովորական բան է, ոտները վարժ են: Վերջին ամիսները սովածութիւնն այնքան սովորական դարձաւ նրա համար, որ մի կտոր հացը նրան երկու օր բաւականացաւ. երրորդ օրը նա մտաւ մի գիւղ և մօտենալով մի հին կիսաթեք խրճթի՝ հաց խնդրեց:

—Ո՞ւր ես գնում, բարեկամ—հարցրեց պառաւը, բաւականին մեծ կտոր հաց տալով նրան:

—Այստեղ, քաղաք:

Պառաւը գլուխը շարժեց.

—Ախար հեռու է, շուտ չես հասնի...

—ի հարկէ, շուտ չեմ հասնի, բայց քանի
որ հարկաւոր է, տատի, ահա գնում եմ:
—Բայց ի՞նչ ունիս քաղաքում:
—Ահա թէ ինչ. տանը հաց չունինք.....
հայրս մեռաւ, հիմա ուզում եմ քաղաքում գործ
փնտռել:

—Եհ, խեղճ տղայ, դարձեալ գլուխը շարժեց
պառաւը. սպասիր մի փոքր, ես կըհարցնեմ մեր
փիւղացիներին, կարծեմ այսօր նրանք պատրաստ-
ուում են Դ. գիւղը գնալ, քեզ էլ հետները կառնեն
կըտանեն, մի քսան վերստ գոնէ սայլով կըգնաս,
ոտներդ կըհանգստանան:

Պառաւը շուտով գլուխ բերեց այս գործը և
հինգ ըռպէից յետոյ մեր Գրիգորիկը հանդիսաւ
էր խրճթում, տաք-տաք կերակուրն առա-
նստած էր խրճթում, տաք-տաք կերակուրն առա-
նստած էր զրոյց էր անում գիւղացիների հետ:
Ջը դրած և զրոյց էր անում գիւղացիների հետ:
Հասակն առած մարդկանց շրջանում նա իրան
հասակաւոր էր զգում և խելացի կերպով պատ-
մում էր տանտիրոջը իւր վշտի և յոյսերի մասին:
Գիւղացիներից մէկը՝ բարի դէմքով ու կապոյտ
գիւղացիներից մի երիտասարդ, երկում էր, որ շատ
սիրեց խելացի Գրիգորիկին:

—Գիտես, եղբայր, ինչպէս տեսնում եմ,
դու լաւ տղայ ես, քեզանից մի բան դուրս կը-
դու լաւ տղայ ես, քեզանից մի բան դուրս կը-
դու լաւ տղայ ես, գիւղեամ, ամի, —դարձաւ նա ծերունի
գայ: Գիտես ինչ, ամի, —դարձաւ նա ծերունի
հօրը—լաւ չի լինի արդեօք, որ սրան ուղարկենք

քեռի Յակոբի մօտ. չէ որ Դ. գիւղից կարելի է
երկաթուղիով գնալ, իսկ քեռին շատ ուրախ կը-
լինի այսպիսի տղայ ունենալուն:

—Հը, ձշմարիտ է, որդի, բարի գործ է.
Յակոբի մօտ, մտախոհ ասաց ծերունին:

—Լսիր, եղբայր, դու մեզ հետ կըգաս մինչև
Դ. գիւղը, այնտեղից մինչև երկաթուղին երկու
վերստ է և եթէ երկաթուղիով գնաս, նոյն օրը
քաղաք կըհանես: Քաղաքումն ապրում է լուց-
կի ծախող մեր քեռին. այսինքն նա շատ հազիւ
է լուցկի մանածում, բայց ունի խանութ և 5
քեզ պէս պստիկ տղայ. ահա այնտեղ քեզ համար
յարմար գործ կըճարուի, հը, համաձայն ես:

Գրիգորը մտածում և կշռադատում էր:

—Կընշանակէ, ես մանրավաճառ պիտի գառ-
նամ, ասում էր նա ինքն իրան. Ի՞նչ արած, այդ
էլ մի բան է, բայց արդեօք նա ինձ վարձ կը-
վճարէ. չէ՞ որ մայրս, քոյրս ու փոքրիկը առանց
փողի չեն կարող կառավարուել. գոնէ այս ձմեռ
ու կարողանային մի կերպ....

—Իսկ դու կարդալ-գրել գիտես—օրինակ
հաշիւ անել, գրել....

—Այս, մի փոքր գիտեմ, գիւղում երկու
շու գնացել եմ ուսումնարան. միայն մեծ հա-
շիւներ չեմ կարող անել:

—Ապա ես քեզ կըհարցնեմ, ախար ես էլ

քաղաքում բանել եմ, մի քիչ խծըլծում եմ,
ասաց երիտասարդը ինքնազո՞ն կերպով:
—Նախշնեն, մի կտոր ածուխ տուր մեզ,
աշխատիր, որ աւելի սև ու ամուր լինի:
Ոտաբորիկ Շ տարեկան Նախշունը վառա-
րանը քրքրեց և բերեց ածուխի կտոր:
Հարցաքննութիւնն սկսուեց զրատախտակի

փոխարէն պատերից մէկի վրայ:
Երկաց, որ Գրիգորը մի քիչ բան գիտէ.
թուանշաններն այնպէս էր զրում, որ կարելի էր
ջոկել, հաշւում էր մինչև 1,000ը, կանոնաւոր
զումարում և հանում էր, բայց դրանից աւելին
դժուարանում էր:

—Լաւ, այդքանն էլ բաւական է, մի քիչ
բան գիտես, ես կարծում եմ, որ քեռի Յակոբը
քեզ ոռճիկ էլ կլնշանակէ, միայն թէ դու զգոյշ
կաց, աշխատիր հաճոյանալ, որովհետև, չէ որ
նա վաճառական է, իր օգուտն է փնտում: Սա-
կայն տեսնում եմ, դու քաջ տղայ ես, չես
կորչիլ:

Այսպիսով գործը գլուխ եկաւ: Գրիգորը հե-
տեսալ օրը հասաւ գ... գիւղը (գիւղացիները
գիշերով ճանապարհ ընկան) և կէս օրուայ ժամը
1-ին արդէն նստած էր երկաթուղու կայարանու՝
սպասելով քաղաք ուղևորուող գնացքի: Ճանա-
պարհածախալ նոյն բարի երիտասարդը տուեց,

—Ա՛ռ, բարեկամ, երբ դու կաշխատես, կը-
տաս: Սա իմ սեպհականն է, տանտիրոջ այգում
բանելիս եմ վաստակել. միենոյն է, ուզում էի
քոյլ Նախշունիս համար կապա գնել, բայց ոչինչ,
չինը կըհագնի:





Գրիգորը առաջին անգամն էր տեսնում երկաթուղին. առաջին անգամն էր վագօնով գնում. բոլորը երազ էր թւում նրան. և կայարանները, և կօնդուկտօրթւում ները, և մարդկանց բազմութիւնը: Սուլոցը, ները, և մի արագիւնիք գնացքը — այդ զանգահարութիւնն ու արագընթաց գնացքը — այդ բոլորն իրար խանութելով՝ մի այնպիսի բան էին առաջացնում, որի նմանը նա երբէք տեսած չէր: Նա կուչ եկաւ մի անկիւնում, պինդ սղմելով նա կուչ եկաւ մի անկիւնում, կապի Յակովի մէջ տոմսակն ու հասցէն և քեռի Յակովի մէջ:

Վերջապէս երկու ժամուայ ձանապարհորդութիւնից յետոյ՝ գնացքը կանդ առաւ քաղաքի մէջ: Հէնց մուտքի մօտ Գրիգորից առան տոմ-

սակը և աղան յայտնուեց իրան անծանօթ քաղաքի մեծ հրապարակի վրայ: Նա անցաւ հրապարակը, մտաւ փողոցներից մէկը և դիմեց առաջին հանդիպողին.

— Քեռի, չգիտե՞ս արդեօք, որտեղ կարող եմ գտնել քեռի Յակովին:

— Կորի՞ր դու քո քեռի Յակովի հետ միասին, բարկացած գոռաց նրա վրայ անցուորը և շարունակեց իր ճանապարհը:

Գրիգորը վախեցաւ և այնուհետև սիրտ չէր անում դիմել անցորդներին: Նա չգիտէր ինչ անէ:

Գրիգորը գտնուում էր գլխաւոր փողոցներից մէկում. լայն, սալած, մեծ քարաշէն տներով ու խանութներով: Գրիգորին թւում էր, թէ ինքը գըտնըուում է մի այլ աշխարհում, հեռու, շատ հեռու: Նրա առաջ խոնուում էին անցորդները, տիկինները՝ զուգուած զարդարուած շքեղ զգեստներով ու զլխարկներով, մանուկներն էլ իրանց դայեակների հետ՝ լայն զլխարկներ ծածկած:


Սալած փողոցներում արագ ընթանում էին կառքեր, քարշ էին գալիս բեռնակիրներ և երբեմն անցնում էին ծածկած կառքեր:

Գրիգորը մի դուան մօտ կուչ եկաւ և վախենում էր աեղից շարժուել. սակայն քիչքիչ երկիւղն անցաւ, նայեց իւր շուրջը և քեռի Յա-

կորին գտնելու ցանկութիւնը նրան ոյժ ու համարձակութիւն տուեց:

Նա մօտեցաւ մի զինուորի և խնդրեց ցոյց սալ քեռի Յակոբի խանութը: Զինուորն, ըստ երեսյթին, այնքան էլ վարժ չէր զրագիտութեան մէջ. նա զրպանից դանդաղ հանեց ակնոցները, դրեց քթին և սկսեց վանկ-վանկ կարդալ հասցէն, «Յակոբ Կարապետեան.... լուցկիի խանութ.... Համբարձման փողոց, Ծուռը նրբուղի»....

«Է՞ս, բարեկամ, ճանապարհիցդ շեղուել ես. այդ համարեա փողոցի միւս ծայրին է, ասաց նա, հասցէն տալով Գրիգորին. դու պէտք զնաս դեռ ուղիղ, յետոյ թեքուես դէպի աջ, երկու փողոց անցնես և ապա այնտեղ կընարցնես»:



Գրիգորիկն առաջ գնաց, և ինչպէս նրան ասացին, շուռ տուեց աջ, յետոյ ձախ, ապա անցաւ մի քանի դատարկ փողոցներ և այսպիսով ոչ ոքի չկարողացաւ հարցնել: Արդէն սկսեց մթնել, բայց Գրիգորը շարունակ առաջ էր գնում. վերջապէս, յոզնած՝ վճռեց պառկել մի կիսափուլ ցանկապատի սնկիւնում և քաղցր քնեց մինչև առաւօտ:

Արեն արդէն բարձրացել էր, երբ նա զարթեց. փողոցում խոնւում էին անցորդները: Գրիգորը դուրս սողաց իւր անկիւնից և չորս կողմը նայեց. նա քաղցած ու ծարաւ էր: Տոպրակի մէջ գեռ էլի մի փոքր կտոր հաց կար, որը նա երեկ չկերաւ, այլ պահեց. նա մեծ ախորժակով անուշ արաւ այդ հացը և անցնող ջրկիրից էլ ջուր խնդրեց:

Զրկիրը կանգ առաւ, փայտեայ ամանով ջուր հանեց տակառից և տուեց Գրիգորին:

—Երեսում է դու գիւղից ես դավիս և ուր
ես գնում, հարցը եց նա:—
—Գիտես ի՞նչ, քեռի, մի գիւղացի եմ փընտ-
ուռմ և չեմ կարողանում դանել:

—Բայց ո՞վ է նա:

Գրիգորը ցոյց տուեց հասցէն:

—Նստիր տակառիս վրայ, ես քեզ կըտանեմ
ուր հարկաւոր է. ես, բարեկամ, այս թաղի բո-
լոր ծակուծուկը գիտեմ և քո քեռի Յակոբի հա-
մար էլ սրանից երեք տարի առաջ ջուր էի
կըտամ:

Գրիգորն ուրախացաւ. նստեց սայլակի եղ-
րին և նրանք առաջ գնացին: Զըկիրը շուտ-շուտ
կանգ էր առնում, դոյլերով ջուր էր հասցնում
մի քանիսի տները և այդպիսով դանդաղ էր առաջ
դնում: Գրիգորին շատ երկար էր թւում ճանա-
պարհը:

—Արդեօք շնուր կըհասնենք, քեռի, երկչո-
տութեամբ հարցնում էր նա:

—Շատ շուտ ես ուզում, բարեկամ, մեր
քաղաքը շատ մեծ է, ձեր գիւղի նման չէ. քո
պատճառով չեմ կարող դուքս թողնել: Ասացի,
որ տեղ կըհասցնեմ քեզ, ուրեմն հանդիսաւ նստիր
վերջալէս երկու ժամից յետոյ հասան չամ-
բարձման փողոցը, Ծուռը նրբուղու անկիւնը:
Գրիգորին տարան «Աղայի» խանութիւն: Բարձ-

րահասակ, գեր ծերունու դաժան դէմքը և այն
միտքը, որ դրանից է կախուած նրա վիճակը
վրդովեցըին Գրիգորին, նրա սիրան սկսեց ուժ-
գին բարախել: Ծերունին նայեց նրան կիտուած
յօնքերի տակից, հանդարտ ու գոռող կարդաց
նամակը, մտածեց, հարթեց մօրուքը, դարձեալ
մի անդամ նայեց Գրիգորին, անդղելով ոսից
մինչև վլուխ և ասաց.

—Ուզում ես ծառայել:

Գրիգորը զլխով դրական նշան արաւ. նա
չէր կարողանում խօսել, կարծես սառը ջուր էին
ածել զլխին:

—Հաշիւ սովորել ես:

Գրիգորը դարձեալ զլուխը շարժեց:

—Այ տղայ, ի՞նչ ես լոել, ես հօ ուտելու
չեմ քեզ. մի վախիր, փոքր ինչ քաղցրութեամբ.
աւելացրեց քեռի Յակոբը, որին՝ ըստ երկոյթին,
դուր եկաւ տղայի երկչուութիւնը:

—Շատ լաւ, ես քեզ կընդունեմ, որովհետեւ
Պետրոսը շատ է խնդրում քեզ համար, միայն
թէ, տես, չպէտք է չարութիւն անես, բոլոր
փողը լիովին պէտք է բերես, պանդոկներում
չպէտք է նստես, քաղցրեցէն չպէտք է առնես և
ինձ չպէտք է խարես: Եթէ մի բան եմ իմացել
քո պարտապանցութեան մասին, հէսց առաջին
անդամից դուրս կըշպրտեմ քեզ: Դէս, հիմա զնա,

այնտեղ քեզ ցոյց կըտան ամենը, կուտացնեն և
կըխմացնեն. իսկ ոռձիկդ շաբթէ շաբթէ կըստա-
նաս և այն էլ ծառայութեանդ համեմատ:

Գրիգորն ազատ շունչ քաշեց, երբ դուրս
եկաւ կից սենեակը, որտեղ սեղանի շուրջը նրա-
տոտած էին հինգ հոգի իր չափ տղաներ աւագ-
գործակատարի հետ, որը տաք արդանակ էր բա-
ժանում նրանց, Գրիգորիկին տուին գդալ և նա
միացաւ ընդհանուր սեղանին:

—Ո՞րտեղացի ես դու, ում որդին ես, քանի՞
տարեկան ես, գրել-կարդալ գիտես, հայր ու
մայր ունիս —այսպիսի հարցերով թափուեցին նրա
վրայ ամեն կողմից և Գրիգորը հազիւ էր կարո-
ղանում ամեն մէկին պատասխանել:

Մի ժամից յետոյ նա բոլորովին ընտելացաւ
և մինչև անդամ խնդրեց աւագ գործակատարին,
որ իրան էլ, միւսների նման՝ լուցկիների դարակ
տայ, որ ժամ առաջ կառողանայ գործի կոչել—
աշխատել:

—Լաւ, դրան էլ շուտ կըհամնես, դեռ կը
ձանձրանաս էլ, երբ ոտներդ կոշտուկներով
ծածկուեն. ինչ արագուն է երկում — ծաղ-
րում էին տղաները:

—Վաղը կըգնաս, պատասխանեց գործակա-
տարը. մեզ մօտ այնպէս է ընդունուած, որ նոր
եկողին առաջին օրը ազատութիւն են տալիս:

Տղաները գնացին, իսկ Գրիգորն անգործու-
թիւնից այս ու այն կողմն էր ընկնում և զննում
գործակատարին, որին հաւանեց նրա բարեսըր-
տութեան և զրուցասիրութեան համար:

—Այստեղ, մեզ մօտ, դու լաւ կապրես,
բարեկամ, եթէ միայն ինքդ կաշխատես և զան-
ցառու չես լինիլ. մեր աղան ամենից աւելի ա-
տում է ստախօսներին և խարեբաներին և այդ-
պիսի գէպքերումն էլ, եթէ ներողութիւն խնդրես,
կըների. բայց վայ քեզ, եթէ աշխատես մեղքդ
ծածկել, անմիջապէս դուռը ցոյց կըտայ: Մեր
աղան խիստ մարդ է, չի սիրում երես տալ և
եթէ մի բան նշմարէ, իսկոյն նկատողութիւն
կանէ և դորա համար էլ՝ ոչ միայն ծառայողնե-
րը, այլ և տանեցիք վախենում են նրանից: Բայց
միւսոյն ժամանակ և արդարադատ է, անաշատ
է. եթէ պատահմամբ ինքը վիրաւորէ քեզ, պատ-
րաստ է ներողութիւն խնդրելու. ճիշտ է, դէմ-
քով շատ բարկացկոտ է, բայց սիրաը բարի է:

Գրիգորիկը շուտով ընտելացաւ նոր գործին.
ուրախ ու զուարթ շրջում էր քաղաքի փողոց-
ները և հմտութեամբ առուտուր անում. փողի
հաշիւն էլ ճիշտ էր պահում: Նրան շաբաթական
մի ոուբլի սոճիկ նշանակեցին և նա երկուրդ
ամսի սկզբին 4 բուբլի լիովին ուղարկեց իր մօրը:



Զ



Յունիսի վերջն էր: Արեգակը սաստիկ այրում էր: Արեկի կրզիչ ճառագայթներից ամարանողի տները կարծես կէծացել էին: Մարդիկ, անասունները, թռչուններն ու ձմռածքիկ, անապահները, մինչև անգամ մուծակները թմրած շրջում էին. մինչև անգամ մոծակները կարծես մոռացել էին խայթել և միայն կպչում էին ապակիներին:

Փոշոտ ճանապարհով անցնում էր փոքրիկ լուցկիավաճառը և իրաքանչիւր տան առաջ կանչում.

Լաւ ծխախոտ ու լուցկի

Ով կամենայ թող առնի...

Ամարանոցներից մէկի դռան առաջ կանգնած էր իւր դայեակի հետ հինգ տարեկան մի աղջիկ՝ թմբիկ վարդագոյն այտերով, ուրախ ու աչերով ու ալ-կարմիր շրթունքներով.

— Ա՛խ, դայեակս, նայիր, ի՞նչ ծիծաղելի է այն տղան, ի՞նչպէս է կանչում, ի՞նչ է ծախում. գնիր խնդրեմ, մի բան:

— Նա լուցկի և ծխախոտ է ծախում, հոգեակս, մեզ ի՞նչ հարկաւոր են դրանք:

— Ոչինչ, գնիր, ես հայրիկին կըտամ, գնիր, խնդրում եմ.... և նա կեղծաւորութեամբ սկսեց փարիլ պառաւի վզով:

Գրիգորը կանգ առաւ և սպասում էր:

— Եհ, փոքրիկս, միշտ պէտք է ուզածդ կատարես, կիսաբարկացած սասց դայեակը. սպասիր այստեղ, գնամ խոհարարից փող վերցնեմ, և նա ծաղկոցի միջով անցաւ գնաց պատշգամբը:

Աղջիկը կանգնած էր Գրիգորիկի առաջ՝ մէջքը գէպի ճանապարհը դարձրած. նրանք լուռ գննում էին իրար:

Յանկարծ լսուեց օդում մի տարօրինակ փոնչոց և ճանապարհին տոփիւն. Գրիգորիկը յետ նայեց և ի՞նչ տեսնի.... Ահազին սկ շուն. մթագնած աչքերով, դուրս ցցուած լեզուով ու հուփ տուած պոչով՝ ուղղակի գէպի աղջիկն էր վազում. նրա բերանից կաթկաթում էր գորշ փըրփուր, որը կտոր-կտոր կախ էր ընկած և դնչից: Շունը փոթկացնում էր, խրկում, գնչացնում, վընգվընդում, դողում և կորացրած գլուխը երերում:

«Կատաղած է» մի միտք փայլեց Գրիգորի
գլուխմ: Նա երբէք տեսած չէր կատաղած շուն,
բայց դիտէր, որ մինում են այդպիսի շներ և
միանդամից հասկացաւ բոլոր վտանգը:

Աղջիկը չէր կարող վակել, քանի որ շունը
երկու քայլ միայն հեռու էր նրանից. հարկաւոր
էր միայն պաշտպանել նրան: Գրիգորիկը իր մա-
սին էլ չմտածեց. «Ժամանակ չկար» պատմում
էր նա այդ դէպից յետոյ: Նա մի ակնթարթում
գետին զցեց լանջափոկը լուցկիների արկով
միասին, հրեց աղջկան դէպի դուռը և ինքը
նրա առաջ, պաշտպանելով չնից: Շու-
կանգնեց նրա առաջ, պաշտպանելով չնից: Նու-
նը յարձակուեց Գրիգորիկի վրայ և ճանկեց նրա
աջ ձեռքը: Նա ճշաց ցաւից, սակայն միւս՝ ազատ
ձեռքով սեղմեց նրա կոկորդը: Նրանք երկուսն
էլ գետին գլորուեցին, բայց ոչ շունն էր մը-
տադիր թողնելու Գրիգորի ձեռքը, ոչ Գրիգորն
էր դադարում նրան խեղզելուց: Աղջիկը երկիւ-
դից քարացաւ և չկարողացաւ ոչ ճիշ արձակել,
ոչ տեղից շարժուել:

Այդ միջոցին տան պատշգամբի վրայ երե-
ցաւ դայեակը՝ պղնձի դրամը ձեռքին: Նա՝ սար-
սափած այս տեսարանից, ուժգին ճիշ արձակեց,
դրամը դուրս ձգեց ձեռից և վազեց դէպի աղջիկը:
—Գոհարիկ, հոգեակս, աղաղակում էր նա,
տանելով երեխային. «օգնեցէք, աղատեցէք»:

Նրա աղաղակի վրայ հարևան տներից դուրս
վազեցին ծառաները, պատշգամբները լցուեցին
ամարանոցի բնակիչներով, բայց ոչ ոք սիրտ
չէր անում ազատել Գրիգորիկին կատաղած շան
ճանկերից: Վերջապէս հարևան տան հիւմնը
վերցրեց կացինը և այնպէս ուժով խփեց շան
զլիին, որ տեղն ու տեղը սատկացրեց:

Գրիգորիկը ուշաթափարածուել էր գետնին:

—Բժիշկ, բժիշկ է հարկաւոր, եղբայրներ,
ասում էր հիւմնը՝ կուանալով դէպի տղան. խեղձ
երեխայ... .

Մէկը վազեց բժիշկի յետկից: Այդ ըոսէին
դայեակը շնչառառ դուրս վազեց ամարանոցից:

—Ո՞ւր է նա, իմ աղաւնեակը, ո՞ւր, աղա-
դակում էր նա, ձեղքելով ամբոխը՝ որ հետզհետէ
ստուարանում էր: Կենդանի՞ է արդեօք. չէ որ
նա իմ սանիկս ազատեց, ապա թէ ոչ շունը
կըգգըզէր նրան.... Նա ծունկ չոքեց Գրիգորիկի
առաջ, բռնեց նրա վիրաւորուած ձեռքը և սկսեց
զգուշութեամբ ծծել հոսող արիւնը:

—Ի՞նչ ես անում, այ պառաւ, ասում էին
արջապատողները. երեւում է կեանքը թանկ չէ
քեզ համար. սակայն նա ոչ ոքին չէր լսում՝
ծծում էր և թքում:

Բժիշկն եկաւ:

—Ղոշանդ պառաւ. Ի՞նչ լաւ բան ես մտա-

ծել, գովեց նա, բաց անելով իւր գործիքները:
Մայրն ես:

—Ո՞չ, պարոն, մայրը չեմ. բայց ինչպէս
թողնեմ նրան՝ մեռնի, քանի որ իմ աղաւնեակիս՝
սանիկիս փրկեց: Ախար, չէ որ մահապարտ պի-
տի դառնայի, չէ որ ես՝ քաւթարս չկարողացայ
ուշադիր լինել տիրոջս երեխային. ասում էր նա:

—Լաւ, հանգստացիր, գուցէ առողջացնենք:
Բժիշկն շատապով այրեց վերքը և հրամայեց
տղային տանել հիւանդանոց:

Տեղեկացան և յայտնեցին այդ մասին քեռի
Յակոբին, իսկ վերջինս իմաց արեց Գրիգորիկի
մօրը:

«Այդ էր պակաս. ախար, որ մեռնի, ես
ի՞նչ պատասխան տամ. դեռ կարեսը վկայականն
էլ չեմ ձեռք բերել», ասում էր քեռի Յակոբը և
ուղարկեց Մարիամի համար ճանապարհածախս,
ուղարկեց Մարիամի համար ճանապարհածախս,
ըստառի գայ: Սյս լուրը լսելուն պէս՝ Մա-
րիամը շանթահար եղաւ: Հենց նոր էր ստացել
նա Գրիգորիկից սովորական 4 լուրին և փայ-
լուն յոյսերով լի նամակ և ահա դարձեալ «Պը-
բաղդութիւն»:

Մարիամը առատ արցունք թափելուց յետոյ
դարձաւ աղջկան ու տսաց.

—Ես կը դնամ նրա մօտ, Լուսիկս:

—Իսկ փոքրիկն ի՞նչ ես անում, մայրիկ:

—Ա՛յս, լուսիկ ջան, գժուարանում եմ Աշո-
տին թողնել, ի՞նչով պէտք է կերակրես. բայց չէ
որ նա էլ իմ որդիս է, իմ արիւնս. սիրոս կտոր
կտոր է լինում, չգիտեմ, ի՞նչ հնար գտնեմ:

Լուսիկը մտածմունքի մէջ ընկաւ:

—Գիտե՞ս ինչ, մայրիկ, կը վազեմ Եղիսաբե-
թի մօտ, նա վաղուց խնդրում է, որ ես դայեակի
պաշտօնով մտնեմ նրա մօտ. գուցէ ինձ Աշոտի
հետ միասին ընդունի. Աշոտն այժմ մեծ է, ար-
դէն չորեքթաթ է անում, ես մի կերպ կը հսկեմ,
իսկ Եղիսաբեթը կաթ շատ ունի — երկու կող
է կթում:

—Ոհ, իմ անգին, շնորհակալ եմ քեզանից,
իմ խելացի դստրիկ, ուրախ արտասանեց Մա-
րիամը:

Եղիսաբեթը, զիւղի տանտիրոջ կինը՝ լու-
սիկին Աշոտի հետ միասին ընդունեց: Լուսիկը
յայտնի էր իբրև ժիր ու աշխատասէր աղջիկ և
բացի դրանից նա առաջարկում էր ծառայել ձրի
— կերակրի գնով:

Մարիամը ճանապարհ ընկաւ:





Ե



Փոքրիկ մաքուր սենեակում դրած է 4
մահճակալ: Մաքուր յատակն ու նոր
ներկած մարգարտագոյն պատերը փայլում են,
ապակիները այնպէս թափանցիկ են, որ կարծես
լուսամուտների մէջ ապակի չկայ. ամեն տեղ
հոգատարութիւն և խնամք է երեսում:

Մահճակաները ծածկուած են մաքուր սպի-
տակեղինով և կարմիր ժապաւէն բոլորած սպի-
տակ բրդոտ վերմակներով. մահճակաների մի-
ջանցքում դարսած են փոքրիկ սեղաններ: Սե-
ղաններից մէկի վրայ դարսած են զանազան
շներ, սրուակներ, տուփեր, որոնց միջից աչքի
է ընկնում ջրով լի մեծ կաւէ դաւաթը: Մահ-
ճականերից միայն մէկն է բռնուած, միւսները

դատարկ են: Լուսամուտի մօտ՝ մի անկիւնում
նստած է հիւանդապահ կինը ձեռագործը ձեռին
և ննջում է: Վարագրյները իջեցրած են: Վեր-
ջին լուսամուտը բաց է, որտեղից ներս է մըտ-
նում լոյսն ու տաքութիւնը: Մահճակալի վրայ
պառկած գրիգորիկը տաքութիւնից շփոթվում է:
Արդէն չորրորդ օրն է, որ նա հիւանդ է, այն
ինչ ոչ մի լաւութիւն չէ նկատում: Տաքութիւ-
նը երբեմն իջնում, երբեմն բարձրանում է, տես-
դային գրութիւնը չէ ընդհատում: Երկու անգամ
այցելել է նրան դայեակը և աւագ բժշկից տե-
ղեկացել՝ արդեօք յոյս կայ առողջանալու:

— Դեռ ևս ոչինչ չեմ կարող ասել. գեպքը
վտանգաւոր է, սաստիկ ցնցում է առաջացել,
կարող է ուղեղի բորբոքումի փոխուել:

— Ա՛յս Աստուած, չինի թէ թոյնիցն է այդ:
Երկի ես, պառաւ՝ չկարողացայ լաւ դուրս ծը-
ծել կամ թէ գուցէ բժիշկն ինչպէս հարկն է՝
չայրեց վերքը. հարցնում էր պառաւը արտասու-
քը սրբելով:

— Դեռ ևս ոչինչ չի կարելի որոշել, պա-
տասխանեց բժիշկը և հեռացաւ:

Փրկուած աղջկայ հայրը նոյնպէս եկաւ հի-
ւանդանոց և երկար ժամանակ զրոյց էր անում
բժշկի հետ. երեսում էր, որ մի բանի մասին շատ
էր ինդրում բժշկին:

հակ Գրիգորիկի գըռութիւնը չէր լաւանում.
նա ոչ ոքին չէր ճանաչում, շփոթւում էր, զա-
ռանցում. բժիշկները միայն ուսերն էին սեղմում:

Նախասենեակում ոտքի ձայն լսուեց. հի-
ւանդապահը վեր կացաւ և դուռը բացեց: Նրա
առաջ կանգնած էին զթութեան քոյրերից մէկը
և մի նիհար, կուացած, բայց ոչ պառաւ կին՝
մաշուած զգեստով ու ծակծկուած վերարկուով:

—Ո՞ւր է, ուր, իմ աղաւնեակը, հառաչելով
ու լպլով շշնջում էր Մարիամը:

—Ահա քոյրիկ, ցոյց տուեց զթութեան քոյ-
րը: Դուք այստեղ նստեցէք մինչեւ աւագ բժշկի
գալը, որից և թոյլտութիւն կըխնդրէք ձեր որ-
դու մօտ մնալու, շատ կարելի է, որ թողնի, իսկ
ես թոյլ տալու իրաւունք չունիմ:

—Ախ, քոյրիկ, կըխնդրեմ, ոտքերը կընկ-
նեմ, գուցէ աղաչանքս լոէ, չէ որ նա էլ մարդ-
կային սիրտ ունի, ինչպէս կարդիլէ մօրը իր
հարազատ զաւակի մօտ մնալ:

Գթութեան քոյրը գնաց: Մարիամը հան-
դարտ մօտեցաւ անկողնին, սակայն տեսնելով իր
Գրիգորիկի տեսնդից բռնուած հիւանդ գէմքը ա-
զօտ ու անշարժ աշքերով՝ չկարողացաւ զսպել
իրան, բարձրածայն հեկեկաց և ծնկաչոք ընկաւ
մահճակալի առաջ:

—Որդեակս, աղաւնեակս, իմ պահապան

հրեշտակ, կարողացաւ արտասանել նա. վայ ինձ,
այս ի՞նչ եմ տեսնում:

Հիւանդապահը մօտեցաւ նրան և ուսից քա-
շեց:

—Լսիր, մօրքոյր, ի՞նչ ես զլուխոդ սպանում,
գեռ հօ չէ մեռել. դուցէ և բժիշկները ճար ա-
նեն: Լսիր, վեր կաց, ահա և աւագ բժիշկը գա-
լու է, նա շատ խիստ մարդ է, կարող է քեզ
այստեղից արաւաքսել....

Մարիամը անասելի ուժ գործ գրեց, վեր
կացաւ, գոզնոցով բերանը փակեց, կուրծքը
բռնեց և շնչառապ սպասում էր աւագ բժշկին:
Ներս մտաւ մի բարձրահասակ, նիհար ծերունի՝
լուրջ գէմքով և կապոյտ մատիսն աչքերով: Ալե-
խանն շէկ մազերը խիստ թափուած էին բարձր
ձակատին, փոքրիկ դժգոյն և նիհար ծերոքին բռնած
ունէր մի փաթեթ, իսկ շրթունքներին ժամանակ
առ ժամանակ երևում էր մատզբաղ ժպիտ: Նրա
յետեկց գալիս էին դարձեալ երկու բժիշկ և
զթութեան քոյրը. սակայն Մարիամը՝ միայն նրան
տեսաւ:

—Բարերար տէր, իմ պաշտպան, մի թողնիր
մեզ, թոյլ տուը աղօթել քեզ համար առ Աստուած,
ասաց Մարիամը՝ ընկնելով բժշկի ոտքերը:

—Ի՞նչ է կամենում սա, ինչի՞ մասին է
ինդրում, զիմեց նա զթութեան քրո՞ջը:

Սա հիւանդի մայրն է, խնդրում է, որ թոյլ
տաք որդու մօտ մնալու, բացատրեց նա:

— Հը՛-ը.... արտասանեց բժիշկը և սկսեց
գերմաներէն խօսել բժիշկների հետ:

Մարիամը վեր կացաւ և սրտատրոփ սպա-
սում էր վճռին: Բժիշկը վերջապէս դիմեց նրան:

— Լաւ, մայրիկ, դուք կարող էք մնալ միայն
այն պայմանով՝ որ մեզ չխանդարէք նրան բժըշ-
կելու, լսէք ինչ որ ես ձեզ կըպատուիրեմ և
չանէք պյն, ինչ որ վնասակար է ձեր որդու հա-
մար, նա վտանգաւոր հիւանդ է և ամենափոքը
անզգուշութիւնն անգամ կարող է նրան վնասել:

— Ծնորհակալ եմ, բարերար տէր, ինարկէ,
կըլսեմ, ամեն բան այնպէս կըկատարէմ, ինչպէս
դու կըհրամայես, ոչ մի խօսք չեմ բաց թողնիլ,
չէ՞ որ նա իմ հարազատ զաւակն է:

— Ինարկէ, ժպտաց բժիշկը և սկսեց հիւան-
դին քննել:

Մարիամը հեռուից դիտում էր, թէ ինչ է
անում բժիշկը. նա այժմ ամբողջապէս ապրում
էր իւր հիւանդ երեխայի կեանքով և, թէ չ էր
հասկանում, բայց բնազդմամբ գուշակում էր, թէ
ինչ է հարկաւոր: Ահա բաց արին հիւանդի վեր-
քը: Ճնշուեց Մարիամի սիրոը, երբ տեսաւ ա-
հազին սկ բիծ՝ շուրջը ուսած, սակայն Մարիամը
զապէց իրան, աւելի ևս մօտեցաւ և նայում էր,

թէ ինչպէս լուսացին վէրքը ու այրեցին մի տե-
սակ գեղով: Երկի շատ էր ցաւում, որովհետեւ
երեխան ամբողջապէս կծկուել էր բժշկի ձեռ-
քերում, որը պահում էր նրան:

Մարիամը մտածեց. «Հէ որ ես աւելի գո-
րովով կըպահէի Գրիգորիկիս ձեռքերիս մէջ».
բայց նա չհամարձակուեց մօտենալ: Այնուհետեւ
ծուատ դրին վէրքի վրայ, պինդ փաթաթեցին
և դրին կեղեի մէջ: Մարիամը չէր հասկանում,
թէ ինչո՞ւ են այսպէս անում, սակայն հաւատում
էր, որ այս բոլորը կարեոր է և յուսով լի՛ նայում
էր բժիշկներին:

Հիւանդի հետ գործը վերջացնելով՝ բժիշկը
նորից մօտեցաւ Մարիամին.

— Դուք, քոյրիկ, կարծեմ չքաւոր էք, գիւ-
ղից էք եկել, թէ այստեղ էք ապրում:

Մարիամը պատմեց նրան իր բոլոր անաջո-
ղութիւնների մասին և բժիշկը լսում էր հետա-
քրքրութեամբ: Նրա մեծ մտախոհ աչքերը մի
քանի անգամ կարծես ակամայ հետաքրքրութեամբ
դարձան դէպի Գրիգորիկի բորբոքուած դէմքը:
Երբ Մարիամը վերջացրեց՝ բժիշկն ասաց.

— Մի վհատիք, գուցէ և յաջողուի նրան
առողջացնել, սակայն գեռ կըսպասենք: Ապա
դառնալով դէպի գթութեան քոյրը, կիսաձայն մի
բան ասաց, որ Մարիամը չլսեց.

—Նա ձեզ դարձեալ ի՞նչ ասաց, քոյրիկ,
հարցը Մարիամը վերադարձող քրոջը:

—Նա կարգադրեց, որ ձեզ համար կերա-
կուր ուղարկեն իրանց խոհանոցից և պատուի-
րեց որ իսկոյն իմաց տան նրան, եթէ Գրիգորի-
կի գրութիւնը վատանայ:

—Ահա մի ազնիւ հոգի. Ես հէնց աչքերից
ճանաչեցի—ասաց Մարիամը և նստեց Գրիգորիկի
անկողնի մօտ:



Որեկոյեան Գրիգորիկի գրութիւնը
վատացաւ, նա շփոթւում էր, մօրը,
քրոջը կանչում, խօսում էր քեռի Յա-
կորի հետ և զառանցանքի մէջ լուցկի էր ծա-
խում: Աչքերը կարծես մեծացան, բերանը կիսով
չափ բացուեց, երակները լցուեցին..... Հիւան-
դապահը վագեց գթութեան քրոջ յետեից. վեր-
ջինս առաւ Գրիգորիկի առողջ ձեռքը, հանեց
ժամացոյցը և սկսեց հաշուել:

—Այն ի՞նչ է անում. կամացուկ հարցը եց
Մարիամը հիւանդապահին:

—Հաշում է արեան զարկը երակների մեջ,
որ խմանայ՝ ինչպէս է խփում—սովորականի պէս,
թէ աւելի արագ....

Գթութեան քոյրը մտածմունքի մէջ ընկաւ,
հիւանդի գլխին սառուցն ուղղեց և հիւանդապա-
հին ուղարկեց աւագ բժշկի յետից:

Հինգ րոպէից յետոյ եկաւ բարի ծերունին:
Նա ձեռքը նայեց, նոյնպէս հաշուեց զարկերակը,
արտեանունքը բաց արեց, աչքերը զննեց, վիզը
շօշափեց, ջերմաչափը դրեց կոան տակը, նայեց
և ապա դառնալով դէպի քոյրն՝ ասաց.

— Սա ճգնաժամն է... սառուցը փոխեցէք,
սպիտակեղէնը պատրաստ ունեցէք, եթէ քրտինք
երեայ, զգոյշ կացէք. գուցէ և խելագարուի....

Մարիամը շլսեց բժշկի վերջին խօսքերը,
որովհետեւ վերջինս շատ կամաց էր խօսում:

Քոյրիկ, ասա խնդրեմ, ի՞նչ է սպասում Գրի-
գորիկիս. այն ի՞նչ էր ասում բժիշկը, հարցըց
Մարիամը և սառը քրտինք պատեց նրա ճակատը:

— Սպասեցէք և աղօթեցէք. այսօր հիւան-
դութեան ճգնաժամն է, պատասխանեց քոյրը:

Նա մնաց հիւանդի մօտ:

Հիւանդի չորս կողմը խորհրդաւոր լոռութիւն
էր տիրում. լւում էր միայն նրա հառաչանքն
ու անկապ խօսքերը, նրա շփոթուելը: Մարիամը
ծնկաչոք կանգնած էր նրա գլխավերեր և ջերմե-
ռանդութեամբ աղօթում էր. քոյրը նստած էր
մահճակալի. միւս կողմը և շուտ-շուտ փոխում
էր գլխի թաց շորը: Հիւանդապահը կանգնած

հիւանդի ոտքերի մօտ, անտարբերութեամբ գուլ-
պայ էր գործում և կարծես ննջում էր:

Այսպէս անցաւ Յ ամբողջ ժամ: Կէս գիշերը
վաղուց էր անցել: Զերմութիւնը չէր աւելանում.
հիւանդը սկսեց հանդարտուիլ և վերջապէս քնեց:

Գթութեան քոյրը վեր կացաւ, Մարիամին
նշան արաւ, որ իրան հետեւէ: Նրանք դուրս ե-
կան նախասենեակ:

— Նա երկի երկար կըքնի այժմ, եթէ զարթնի
և քրտինք ունենայ, հարկաւոր է խսկոյն փոխել
սպիտակեղէնը, միայն թէ ինձ կանչեցէք, այդ
բանը շատ զգուշութեամբ պէտք է կատարուի,
որպէսպի չմրսի:

— Ասա, ինդրեմ, քոյրիկ, արդեօք երեխաս
հիմա աւելի լաւ է, անհամարձակ հարցըց Մա-
րիամը:

— Դեռ չի կարելի որոշ ասել, միայն ես
կարծում եմ, որ կըթեթեանայ:

Մարիամը փոքր ինչ հանգստացաւ: Նա ե-
րեք օր է, աչքը չէր խփել և նստելով աթոռի
վրայ՝ ակամայ սկսեց ննջել:

— Պառկիր, քոյրիկ. ես, միենոյն է չեմ քնե-
լու, ասաց հիւանդապահը և պառկեցրեց Մա-
րիամին մօտիկ մահճակալի վրայնախապէս սաւան
գցելով վրան:

Մարիամը քաղցր քուն մտաւ և երկար ժա-

մանակ սենեակում ոչ մի ձայն չէր լսում բացի ժամացոյցի ըլխկ-չըլխկոցից և քնածների խռմիոցից:

— Մայրէկի, լսելի եղաւ Մարիամին Գրիգո-
րիկի թոյլ ձայնը։ Նա շտապով վեր թռաւ և վա-
րեց անկողնի մօտ։ Վաղելիս՝ ոտը դիպցրեց յա-
տակի վրայ պառկած հիւանդապահ կնոջը, սա-
կայն անուշադիր թողեց այդ։ Նրա առաջ պառ-
կած էր աշխոյժ Գրիգորիկը ուշքը գլուխն, նայում
էր և ժպտում մօր երեսին։ Տէր Աստուած, որ-
քան երջանիկ էր Մարիամը. նա կարծում էր թէ
ամբողջ աշխարհը իրանն է. այդ ըստէին Գրիգո-
րիկը կը կնակի թանկագին էր նրա համար, կը ըկ-
նակի սիրելի. նա, կարծես, երկրորդ անգամ
ծնուեց Մարիամի համար։

ծնուեց Մարիսամի հասար. — Գրիգորիկ, անդին զաւակս.... առաց Մա-
րիամն ուրախութեան արցունքներն աչքերին և
սկսեց համբուրել որդու այտերը, ճակատն ու
վիզը, յանկարծ նրա ձեռքը դիպաւ հիւսնդի թաց
շապկին:

— Ա՛յս, ինչ բժամիտն եմ ես, ախար երեւ-
խաս բոլորովին քրտնած է, պէտք է քոյրիկի
յետեկց ուղարկել: Նա բովեց հիւմուդապահին,
առ ևեսագարի պէս վեր թռաւ տեղից:

— Միթէ քնած էր այս, եղանակ քնած էր,
այս ի՞նչպէս պատահեց....

— Լաւ, լաւ, վաղիր իսկոյն քոյրիկի մօտ,
ասա, որ հարկաւոր է շապիկը փոխել:

Քոյլն եկաւ և զգուշութեամբ՝ սաւանի տաւ-
կով, փոխեցին շապիկը։ Գրիգորիկը լուռ էր և
չէր արգելում նրանց ցանկացածի պէս վարուել
իրան հետ։ Նա թոյլ էր, բայց տաքութիւնն
իջել էր և ինքը ուշքի եկել։

— Այժմ, քոյրիկ, զգոյշ եղէք, շատ մի խօսեցնէք նրան և ինքներդ էլ շատ մի խօսէք, ասաց զթութեան քոյրը. ամեն անգամ, երբ քըրտինք երկայ, ինձ խմաց արէք:

— Ամեն բան կանեմ, քոյլիկ, միամիտ եղեք.
ասաց ուրախացած Մարիամը:

Գլիգորիկն սկսեց արագ առողջանալ. մի
շաբաթից յետոյ արդէն նա դուրս եկողների թը-
ւումն էր հաշում, իսկ 10 օրից յետոյ դուրս
եկաւ հիւանդանոցից. Նա դեռևս չէր կարողա-
նում ազատ դործածել ձեռքը. ամեն օր նա մի
քանի անգամ շարժում և ուղղում էր մատները
իրաւ առողջ ձեռքով:

Աւագ բժիշկը պատուիրեց նրան մօր հետ
իսակին դալ իր մօռ:

—Կեցցես, Գրիգորիկ, ասաց բժիշկը, ձեռքը
նելով նրա ուսմին, ահա քեզ շաքարեղէնի հա-
մար —և դրեց նրա ափի մէջ կապոյտ թղթադրամ:
ու ձեզ, քոյրիկ, ես լաւ նորութիւն կասեմ:

Այս աղջկայ հայրը, որին ձեր որդին ազատեց
կատաղած շանից՝ կամենում է հոգ տանել նրա
ապագայ վիճակի մասին, ահաւասիիկ, տալիս եմ
ձեզ հասցէն, գնացէք նրա մօտ, նա ինքը կըխօսի
ձեզ հետ: Գրիգորիկի աղան՝ քեռի Յակոբը նոյն-
պէս մի քանի անգամ տեղեկացել էր և անտար-
բեր չէ նրա վիճակին:

Մարիամն ու Գրիգորիկը գնացին:



Ա Ե Բ Հ Ա Բ Ա Ն

Ի՞նչ եղաւ Գրիգորիկը:
Նրան տուեցին արուեստագիտա-
կան դպրոց:
Գրիգորիկի ուսման միջոցին՝ նրա
ընտանիքի մասին հոգում էր քեռի
Յակոբը. Լուսիկին փոքրիկ Աշոտի հետ
միասին առաւ իր մօտ, իսկ մօր համար աղախնի
տեղ գտաւ մի հարուստ վաճառականի տանը:
Ութը տարին երազի պէս անցաւ:

Գրիգորիկը ընտիր վկայականով աւարտեց
ուսման ընթացքը և դարձաւ հմուտ մեքենայա-
գէտ: Փրկուած աղջկայ հօր միջոցով նա մի գոր-
ծարանում լաւ պաշտօն գտաւ և առաւ իր մօտ
մօրն ու քըռչը: Ինսը տարեկան թմբկիկ Աշոտը
նոյնպէս սովորում է ուսումնարանում և մտադիր
է մտնել նոյն դպրոցը, որտեղ աւարտեց Գրիգո-
րը. միայն նրա ուսման վարձը կըվճարէ իւր եղ-
բայրը, որը յոյս ունի գլխաւոր մեքենայապետի
պաշտօն ստանալու նոյն գործարանում: Տօն օրե-

ըլ նրանք յաճախ լինում են քեռի Յակոբի մօտ,
որը, երբեմն, ուրախ արամադրութեան ժամանակ
խոստանում է Գրիգորին կտակել մի տասնեակ
հազար. իսկ Գրիգորը այս առիթով ծիծաղելով
ասում է.

—Քեռի Յակոբ, դուք ձեր մերձաւորները
ունիք, ես ձեզ համար օտար եմ, և վերջապէս
ի՞նչ հարկաւոր է. փողը երես է տալիս մարդուն,
ամենից լաւն այն է, երբ մարդս սեպհական դա-
տողութիւն և առողջ ձեռքեր ունի....

—Այդ այդպէս է, սակայն փողն էլ լաւ բան
է, նկատում է քեռի Յակոբը:

—Ինձ համար թանկ է միայն այն փողը, որ
իմ սեպհական աշխատանքով եմ ձեռք բերել....

Եւ ձշմարիս՝ ի՞նչ հարկաւոր է նրան մեծ
փող։ Գրիգորը գործունեայ և հմուտ վարպետ է.
Նա այժմ էլ ոչ մի նեղութիւն չի քաշում փողի
կողմից, իսկ ժամանակով՝ ի՞նչպէս ասում են
գործարանի ծառայողները, նա կարող է նշանա-
ւոր մարդ դառնալ։

Մայրն անչափ երջանիկ է, ունենալով այդ-
պիսի որդի, քոյրն ու եղբայրն էլ վայելում են
Գրիգորի սերն ու խնամքը։ Այսպէս երջանիկ և
ուրախ է այս փոքրիկ ընտանիքը։

ՀՀ Ազգային գրադարան



NL0392421

